## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

« 30» նոյեմբերի 2016 թվականի № 29-Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի «ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» № 32-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով՝ ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «Համայնքի 2016 թվականի բյուջեի հաստատման մասին» № 32-Ն որոշման մեջ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները:

1. 3-րդ կետով հաստատված հավելվածի հատված 2-ում՝

1) 3-րդ կետի «ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01.3.3 ծրագրի «720.0 » թիվը փոխարինել «590.0» թվով,

2)14-րդ կետի «սոցիալական հատուկ արտոնություններ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 10.7.1 ծրագրի «2 300.0 » թիվը փոխարինել «2 430.0» թվով,

3)15-րդ կետի «պահուստային ֆոնդ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 11.1.2 ծրագրի «757.5» թիվը փոխարինել «507.5» թվով:

4) «առողջապահություն այլ դասերին չպատկանող» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 07.6.2 ծրագիրը լրացնել «250.0» թվով:

2. 4-րդ կետով հաստատված հավելվածի հատված 3-ի՝

1) «աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածի «18 380.0 » թիվը փոխարինել «16 688.0 » թվով,

2) «պարգևատրում» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4112 հոդվածի «1 400.0 » թիվը փոխարինել « 3 092.0 » թվով,

3) «գործուղում» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4221 հոդվածի « 40.0 » թիվը փոխարինել « 30.0 » թվով,

4) «ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածի « 250.0 » թիվը փոխարինել « 260.0 » թվով,

5) «հուղարկավորության նպաստ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 հոդվածի «600.0 » թիվը փոխարինել « 730.0 » թվով,

6) «նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4819 հոդվածի «810.0 » թիվը փոխարինել « 930.0 » թվով,

7) «պահուստային ֆոնդ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4891 հոդվածի «757.5 » թիվը փոխարինել « 507.5 » թվով:

3. 5-րդ կետով հաստատված հավելվածի հատված 6-ի `
1) «օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01.1.1 ծրագրի`
ա. «աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածի «16 440.0» թիվը փոխարինել «14 810.0» թվով,
բ. «պարգևատրում» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4112 հոդվածի «1 249.0» թիվը փոխարինել «2 879.0» թվով,
գ. «գործուղում» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4221 հոդվածի «40.0» թիվը փոխարինել «30.0» թվով,
դ. «ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածը «40.0» լրացնել «10.0» թվով,

2) «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01.3.3 ծրագրի «նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4819 հոդվածի «610.0» թիվը փոխարինել « 480.0» թվով, «Ընդամենը » տողի «720.0» թիվը փոխարինել «590.0» թվով:

3) «Գրադարաններ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08.2.1 ծրագրի` ա. «աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածի «1000.0» թիվը փոխարինել «938.0» թվով, բ. «պարգևատրում» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4112 հոդվածի «78.0» թիվը փոխարինել «140.0» թվով:

4) «Սոցիալական հատուկ ծառայություններ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 10.7.1 ծրագրի «հուղարկավորության նպաստներ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 հոդվածի «600.0» թիվը փոխարինել « 730.0» թվով, «ընդամենը » տողի «2 300.0» թիվը փոխարինել «2 430.0» թվով:

5) «Պահուստային ֆոնդ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 11.1.2 ծրագրի «պահուստային ֆոնդ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4891 հոդվածի «757.5» թիվը փոխարինել « 507.5» թվով, «Ընդամենը » տողի «757.5» թիվը փոխարինել «507.5» թվով:

6) «Առողջապահություն(այլ դասերին չպատկանող)» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 07.6.2 ծրագրի «նվիրատվությունայլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4819 հոդվածը լրացնել « 250.0» թվով:

Կողմ(7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌՈՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» նոյեմբերի 2016 թվականի № 28

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի № 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ պարբերության պահանջով՝ ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 30-ի № 9 հերթական նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «Համայնքի 2016 թվականի բյուջեի հաստատման մասին» № 32-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2. Համայնքի 2017 թվականի բյուջեի հաստատման մասին

3. Համայնքի սեփականության գույքի 2016 թվականի գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին

4. Խիճ արդյունահանող կազմակերպությունների կողմից կատարվող անօրինականությունների և համայնքի հողակադաստրային քարտեզի անճշտությունների մասին

Կողմ(7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս`098777709,
էլ. փոստ` khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» նոյեմբերի 2016 թվականի № 30 -Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով` ավագանին որոշում է.

1. Հաստատել համայնքի 2017 թվականի վարչական բյուջեն`

1) եկամուտների գծով` 40 955.5 հազար դրամ

2) ծախսերի գծով` 40 955.5 հազար դրամ:

2. Հաստատել համայնքի 2017 թվականի վարչական բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների` համաձայն հավելվածի հատված 1-ի:

3.Հաստատել համայնքի 2017 թվականի վարչական բյուջեի հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման` համաձայն հավելվածի հատված 2-ի:

4.Հաստատելհամայնքի 2017 թվականի վարչական բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման` համաձայն հավելվածի հատված 3-ի:

5. Հաստատել համայնքի 2017 թվականի վարչական բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման` համաձայն հավելվածի հատված 6-ի:

6. Հաստատել համայնքի 2017 թվականի ֆոնդային բյուջեն եկամուտների և ծախսերի գծով` 0:

7. Հաստատել համայնքի 2017 թվականի ֆոնդային բյուջեն եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների և հատկացումների հետևյալ չափերով`

1) համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից մուտք ֆոնդային բյուջե՝ 0,

2) համայնքի ֆոնդային բյուջեի ազատ մնացորդ, որն ուղղվում է ծախսերի ծածկմանը՝0,

3) համայնքի սեփականություն համարվող գույքի օտարումից մուտքեր՝ 0,

4) համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացումներ՝ 0:

8.Սույն որոշման հավելվածը համարվում է սույն որոշման անբաժանելի մասը:

Կողմ(7) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱԳԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված

Խաչփար համայնքի ավագանու

2016 թվականի նոյեմբերի 30-ի N 30-Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 1
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

| Հ/Հ | ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 1 | Հողի հարկ (այդ թվում) | 4 300.0 |
| | ֆիզիկական անձանցից | 4 218.4 |
| | Իրավաբանական անձանցից | 81.6 |
| 2 | Գույքահարկ | 3 500.0 |
| | Շենք-շինությունների (այդ թվում) | 400.0 |
| | ֆիզիկական անձանցից | 398.8 |
| | Իրավաբանական անձանցից | 1.2 |
| | Փոխադրամիջոցներ | 3 100.0 |
| 3 | Տեղական տուրքեր (այդ թվում) | 288.0 |
| | ոգելից նալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար | 124.0 |
| | ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար | 124.0 |
| | շինարարություն սկսելու թույլտվության համար | 40.0 |
| 4 | Տեղական վճարներ (այդ թվում) | 509.0 |
| | աղբահանության վճար | 505.0 |
| | շինարարության շահագործման փաստագրման վճար | 4.0 |
| 5 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճար | 416.8 |
| 6 | Համահարթեցման սկզբունքով պետական բյուջեից տրվող դոտացիա | 31 941.7 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 40 955.5 |

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 01. 1. 1 | Օրենսդիր և գործադիր մարմին պետական կառավարում | 21 141.0 |
| 2 | 01. 3. 1 | Աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայություններ | 50.0 |
| 3 | 01.3.3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 120.0 |
| 4 | 01.6.1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 1 210.0 |
| 5 | 04.2.1 | Գյուղատնտեսություն | 100.0 |
| 6 | 04.2.4 | Ոռոգում | 800.0 |
| 7 | 05.1.1 | Աղբահանում | 1 700.0 |
| 8 | 06.4.1 | Փողոցային լուսավորում | 300.0 |
| 9 | 08.2.1 | Գրադարան | 1 330.0 |
| 10 | 08.2.4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 450.0 |
| 11 | 09.1.1 | Նախադպրոցական կրթություն | 9 200.0 |
| 12 | 09.2.2 | Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն | 100.0 |
| 13 | 10.7.1 | Սոցիալական հատուկ արտոնություններ | 2 300.0 |
| 14 | 11.1.2 | Պահուստային ֆոնդ | 2 154.5 |
| Ընդամենը | | | 40 955.5 |

ՀԱՏՎԱԾ 3
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻԾԱԽՍԵՐԸ՝
ԸՍՏԲՅՈՒՋԵՏԱՅԻՆԾԱԽՍԵՐԻՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4111 | աշխատավարձ | 18 145.0 |
| 4112 | պարգևատրում | 1 396.0 |
| 4212 | էներգետիկ ծառայություններ | 1 450.0 |
| 4213 | կոմունալ ծառայություններ | 1 800.0 |
| 4214 | կապի ծառայություն | 270.0 |
| 4215 | ավտոմեքենայի ապահովագրություն | 50.0 |
| 4221 | գործուղում | 40.0 |
| 4232 | համակարգչային ծառայություններ | 150.0 |
| 4233 | աշխատակազմի մասնագիտ. զարգացման ծառ. | 50.0 |
| 4234 | տեղեկատվական ծառայություններ | 180.0 |
| 4239 | ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 270.0 |
| 4241 | մասնագիտական ծառայություններ | 300.0 |
| 4251 | կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 1 100.0 |
| 4252 | մեքենաների ընթացիկ նորոգում | 300.0 |
| 4261 | գրասենյակային նյութեր | 150.0 |
| 4264 | տրանսպորտային նյութեր | 700.0 |
| 4267 | սնունդ և տնտեսական նյութեր | 100.0 |
| 4269 | հատուկ նպատակային այլ նյութեր | 400.0 |
| 4511 | սուբվենցիա ոչ ֆինանսական պետ. կազմ. | 9 200.0 |
| 4726 | հուղարկավորության նպաստ | 600.0 |
| 4729 | այլ նպաստ | 1 800.0 |
| 4819 | նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմ. | 200.0 |
| 4823 | պարտադիր վճարներ | 150.0 |
| 4891 | պահուստային ֆոնդ | 2 154.5 |
| **Ընդամենը** | | **40 955.5** |

ՀԱՏՎԱԾ 6
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

01.1.1 ՕՐԵՆՍԴԻՐ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4111 | աշխատավարձ | 16 910.0 |
| 4112 | պարգևատրում | 1 301.0 |
| 4212 | էներգետիկ ծառայություններ | 750.0 |
| 4213 | կոմունալ ծառայություններ | 100.0 |
| 4214 | կապի ծառայություն | 270.0 |
| 4215 | ավտոմեքենայի ապահովագրություն | 50.0 |
| 4221 | գործուղում | 40.0 |
| 4234 | տեղեկատվական ծառայություններ | 150.0 |
| 4239 | ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 20.0 |
| 4241 | մասնագիտական ծառայություններ | 50.0 |
| 4252 | մեքենաների ընթացիկ նորոգում | 300.0 |
| 4261 | գրասենյակային նյութեր | 150.0 |
| 4264 | տրանսպորտային նյութեր | 700.0 |
| 4267 | սնունդ և տնտեսական նյութեր | 100.0 |
| 4269 | հատուկ նպատակային այլ նյութեր | 200.0 |
| 4823 | պարտադիր վճարներ | 50.0 |
| Ընդամենը | | 21 141.0 |

## 01.3.1 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ (ԿԱԴՐԵՐԻ) ԳԾՈՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4233 | աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ | 50.0 |
| | **Ընդամենը** | **50.0** |

## 01.3.3 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4232 | համակարգչային ծառայություններ | 120.0 |
| | **Ընդամենը** | 120.0 |

## 01.6.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4212 | էներգետիկ ծառայություններ | 700.0 |
| 4232 | համակարգչային ծառայություններ | 30.0 |
| 4234 | տեղեկատվական ծառայություններ | 30.0 |
| 4241 | մասնագիտական ծառայություններ | 150.0 |
| 4819 | նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 200.0 |
| 4823 | պարտադիր վճարներ | 100.0 |
| | **Ընդամենը** | 1210.0 |

04.2.1 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4241 | մասնագիտական ծառայություններ | 100.0 |
| | **Ընդամենը** | 100.0 |

04.2.4 ՈՌՈԳՈՒՄ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4251 | կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 800.0 |
| | **Ընդամենը** | 800.0 |

05.1.1 ԱՂԲԱՀԱՆՈՒՄ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4213 | աղբահանում | 1 700.0 |
| | **Ընդամենը** | 1 700.0 |

06.4.1 ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4251 | կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 300.0 |
| | **Ընդամենը** | 300.0 |

## 08.2.1 ԳՐԱԴԱՐԱՆ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4111 | աշխատավարձ | 1 235.0 |
| 4112 | պարգևատրում | 95.0 |
| **Ընդամենը** | | 1 330.0 |

## 08.2.4 ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4269 | հատուկ նպատակային այլ նյութեր | 200.0 |
| 4239 | ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 250.0 |
| **Ընդամենը** | | 450.0 |

## 9.1.1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4511 | սուբվենցիա ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին | 9 200.0 |
| **Ընդամենը** | | 9 200.0 |

### 9.2.2 ՄԻՋՆԱԿԱՐԳ (ԼՐԻՎ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4729 | այլ նպաստներ | 100.0 |
| **Ընդամենը** | | 100.0 |

### 10.7.1 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4726 | հուղարկավորության նպաստներ | 600.0 |
| 4729 | այլ նպաստներ | 1 700.0 |
| **Ընդամենը** | | 2 300.0 |

### 11.1.2 ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4891 | պահուստային ֆոնդ | 2 154.5 |
| **Ընդամենը** | | 2 154.5 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» նոյեմբերի 2016 թվականի № 31

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի և 46-րդ հոդվածի պահանջներով՝ավագանին որոշում է. Հաստատել համայնքի սեփականության գույքի 2016 թվականի գույքագրման փաստաթղթերը:

Կողմ(7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» նոյեմբերի 2016 թվականի № 32

## ԽԻՃ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՆՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով՝ ավագանին որոշում է.

Ղուկասավան համայնքում տեղակայված «ԳԻԳ ԱՐՄ», «ՎԶԳՈ» և այլ կազմակերպությունների կողմից Խաչփար համայնքի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներից անօրինական խճի արդյունահանման հետևանքով համայնքին հասցրած վնասների և «Հայպետհողշիննախագիծ» ինստիտուտի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Մասիսի ստորաբաժանման կողմից համայնքի կադաստրային քարտեզում թույլ տրված անճշտություններն ուղղելու նպատակով՝

Ուղերձով դիմել ՀՀ վարչապետին և ՀՀ Արարատի մարզպետին՝ միջոցներ ձեռնարկելու համար:

Կողմ(7) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱԼԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

ՊԱՐՈՆ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Մեծարգո վարչապետ,

Հայտնում ենք Ձեզ, որ Արարատի մարզի Ղուկասավան համայնքում տեղակայված «ԳԻԳ ԱՐՄ», «ՎՋԳՈ» և այլ կազմակերպությունների կողմից անօրինական կերպով Հրազդան գետի տարածքից (որը Խաչփար և Ղուկասավան համայնքների սահմանագիծն է) արդյունահանվում է խիճ, որի հետևանքով Հրազդան գետի հունը խորացվել է 30 մ-ից ավելի, Խաչփար համայնքի 30.0 հա-ից ավելի գյուղատնտեսական նշանակության հողամասեր զրկվել են ոռոգման ջրից: Հրազդան գետի աջափնյա և ձախափնյա թմբապատնեշները (դամբաները), որոնց վերականգնման համար 2004 թվականին պետական բյուջեի միջոցներից ծախսվել է 100 միլիոն դրամից ավելի գումար, ամբողջովին քանդել և խիճը տեղափոխել են: Հրազդան գետի հունից անօրինական կերպով խիճ արդյունահանելու հետևանքով, հունի խորացման արդյունքում, 2013 թվականին Խաչփար համայնքի բնակիչ 13-ամյա Արսեն Բալայանցը ընկել է Հրազդան գետը և խեղդվել:

Հարգարժան վարչապետ, Հրազդան գետից խիճ արդյունահանելու նպատակով, «Հայպետհողշինանախագիծ» ինստիտուտի ղեկավարների և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Մասիսի ստորաբաժանման կողմից միտումնավոր կեղծվել է համայնքի կադաստրային քարտեզը, որի արդյունքում Հրազդան գետի ամբողջ տարածքն ավերվել է, համայնքի սեփականություն հանդիսացող 0.26 հա հողամաս վաճառվել է Ազատաշեն համայնքի կողմից, 1.0 հա-ից ավելի հողատարածք վաճառվել է Դաշտավան համայնքի կողմից աճուրդային կարգով: ՀՀ ոստիկանության Մասիսի բաժնում 2016 թվականի հոկտեմբերի 24-ին հարուցվել է քրեական գործ՝ նշված կազմակերպությունների կողմից անօրինական կերպով խիճ արդյունահանելու համար, սակայն քրեական գործի հարուցումից առ այսօր շարունակում են անօրինական կերպով խճի արդյունահանումը՝ համայնքին հասցնելով մեծ վնասներ:

Խնդրում ենք Ձեզ միջոցներ ձեռնարկել համայնքի սեփականությունը և համայնքին հասցրած վնասը վերականգնելու, մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար:

Կանխավ հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:

Հարգանքներով՝

Համայնքի ավագանու անդամներ

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ,

Հայտնում ենք Ձեզ, որ Արարատի մարզի Ղուկասավան համայնքում տեղակայված «ԳԻԳ ԱՐՄ», «ՎԶԳՈ» և այլ կազմակերպությունների կողմից անօրինական կերպով Հրազդան գետի տարածքից (որը Խաչփար և Ղուկասավան համայնքների սահմանագիծն է) արդյունահանվում է խիճ, որի հետևանքով Հրազդան գետի հունը խորացվել է 30 մ-ից ավելի, Խաչփար համայնքի 30.0 հա-ից ավելի գյուղատնտեսական նշանակության հողամասեր զրկվել են ոռոգման ջրից: Հրազդան գետի աջափնյա և ձախափնյա թմբապատնեշները (դամբաները), որոնց վերականգնման համար 2004 թվականին պետական բյուջեի միջոցներից ծախսվել է 100 միլիոն դրամից ավելի գումար, ամբողջովին քանդել և խիճը տեղափոխել են: Հրազդան գետի հունից անօրինական կերպով խիճ արդյունահանելու հետևանքով,հունի խորացման արդյունքում, 2013 թվականին Խաչփար համայնքի բնակիչ 13-ամյա Արսեն Բալայանցը ընկել է Հրազդան գետը և խեղդվել:

Հարգարժան մարզպետ, Հրազդան գետից խիճ արդյունահանելու նպատակով, «Հայպետհողշիննախագիծ» ինստիտուտի ղեկավարների և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Մասիսի ստորաբաժանման կողմից միտումնավոր կեղծվել է համայնքի կադաստրային քարտեզը, որի արդյունքում Հրազդան գետի ամբողջ տարածքն ավերվել է, համայնքի սեփականություն հանդիսացող 0.26 հա հողամաս վաճառվել է Ազատաշեն համայնքի կողմից, 1.0 հա-ից ավելի հողատարածք վաճառվել է Դաշտավան համայնքի կողմից աճուրդային կարգով: ՀՀ ոստիկանության Մասիսի բաժնում 2016 թվականի հոկտեմբերի 24-ին հարուցվել է քրեական գործ՝ նշված կազմակերպությունների կողմից անօրինական կերպով խիճ արդյունահանելու համար, սակայն քրեական գործի հարուցումից առ այսօր շարունակվում են անօրինական կերպով խճի արդյունահանումը՝ համայնքին հասցնելով մեծ վնասներ:

Խնդրում ենք Ձեզ միջոցներ ձեռնարկել համայնքի սեփականությունը և համայնքին հասցրած վնասը վերականգնելու, մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար:

Կանխավ հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:

Հարգանքներով՝

Համայնքի ավագանու անդամներ

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԷԴԻԿ ՆԱԶԴԱԼՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ